# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՏԱ ՍՊԸ-ն ԵԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 12 | ԱՏԱ ՍՊԸ | ԱՏԱ ՍՊԸ | ԱՏԱ ՍՊԸ | Կրծքանշանն իրենից ներկայացնում է օվալաձև՝ ուռուցիկ մակերեսով շրջանակ, ընդհանուր ֆոնը՝ սպիտակ: Կրծքանշանի երկա¬րու¬թյունը 60 մմ է, իսկ միջնամասի լայնությունը՝ 45 մմ: Կրծքանշանի վերին հատվածի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրա¬պետության զինանշանը, իսկ ներքևի հատվածում՝ կենտրոնում, պատկերված է Հայաստանի Հանրա-պետության դրոշը: Կրծքանշանը եզրագծված է 10 մմ լայնությամբ արծաթագույն դափնեպսակով: Կրծքանշանի միջնամասում՝ ամբողջ լայնությամբ (ձախից աջ) պատ¬կերված է Հայաս¬տանի Հանրա¬պետության ծածանվող դրոշը: Կրծքանշանի կենտ¬րո¬նում՝ դրոշի վրա, 30 մմ տրամագծով կարմիր ֆոնի վրա պատկերված է շրջանակ: Շրջանակի եզրագծով՝ վերևի հատվածում, գրված են «ԱԻՆ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ՀԱՅԱՍՏԱՆ», ներքևի հատվածում՝ «ՓՐԿԱՐԱՐ» բա¬ռերը: Շրջանակի կենտրոնում գտնվող 20 մմ տրամագիծ ունեցող երկրագունդը խորհրդա¬նշող կարմիր շրջանակում զետեղված է նախարա-րության խորհրդանիշը: Նախարարության խորհրդանիշի և շրջանակի եզրա¬գծի ներքևի հատ¬վածում գրված «ՓՐԿԱՐԱՐ» բառի միջնամասում նշված է հռոմեական «I» թիվը: Կրծքանշանի դարձերեսին հորիզոնական մեկ տողով գրված է «ՀՀ ԱԻՆ MES RA» բառերը և լազերային եղանակով դաջվում է կրծքանշանի հերթական համարը /սկսած 0070-ից/: Կրծքանշանը դարձերեսի կողմից ունի պտուտակային ամրակ՝ հագուստին ամրացնելու համար: Կրծքանշանի արտաքին տեսքը պետք է համապատասխանի համաձայնեցված նմուշի արտաքին տեսքին: Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դրոշման եղանակը ապահովում է կրծքանշանների բարձր որակը և ճշգրիտ չափսերը: Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի շեղումը պետք է լինի ոչ ավել քան 0.1 մմ: Պատրաստի կրծքանշանի վրա չի թույլատրվում ՝ Պատկերների և գրվածքների աղավաղում: Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: Մատակարարը կրծքանշանների նմուշների եռաչափ (3D) մոդելավորված նկարները և հետո նմուշները պետք է նախապես համաձայնեցնի պատվիրատուի հետ: Տուփի արտաքին չափերը հետևյալն են՝ (բարձրություն X լայնություն X երկարություն) 15X60X60մմ: Պատրաստված է ստվարաթղթից, կրծքանշանի արտաքին եզրագծով հարթակով՝ իր ճշգրիտ դիրքավորման համար: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Կրծքանշանի հետ տրվում է վկայական (էսքիզ 11) |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АТА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 12 | | | | |